

# ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐԵԱՆ

## ՀԱՅԿՈՒՆԻ

+ 17 Հոկտ. 1908 +

Ապրում էր նա առանց դօդանջելու, մեռաւ ու զնաց լոիկ  
և անձայն: Ոչ պահէ, ոչ շուք, ոչ աղմուկ, ոչ էլ գուցէ արտա-  
սուք, վասն զի գերազոյն արտասուողը, նա՞ որ գերազանցապէս  
նորա հոգու հատորն էր և վշտերի հաղորդակիցը, որպէս և զգա-  
ցումների և գրասիրական ախորժակների բաժանորդը, նորա տա-  
րաբախտ դստրիկը, երեք տարով կանխել էր քան իւր հայրը և  
բռնադատ մահի գիրկն էր ընկել անձնասպանութեամբ:

Այդպէս Հայկունին մտնում է գերեզման առանց հանդիսաւ-  
որ բազմամբոխ յուղարկաւորութեան, առանց յորդաբան ճա-  
ռերի և ծոպաւոր պսակների խոնութեան, անշուք, անարտա-  
սուք:—Եւ այդ էր լաւն և արժանն արժանաւորին: Այդտեղ կեղծ-  
իր չկար: Երեսպաշտութիւնը բացակայ էր իւր ցուցադրական  
ծէսով, և ազքատ ու յաճախ իսկ օրապահիկին կարօտ ապրածը  
այդ անգամ հարուստ թաղում չունեցաւ: Մի բոււռ հոդ մի քանի  
բարեպաշտիկների կողմից, այդ եղաւ կարեկցութեան բոլոր տուր-  
քը, զգացումների ամբողջ նուէրը երախտաւոր Հայկունուն, և  
լրագրական մի երկու համեստ յօդուած:

Լքեալ պանդուխտ, էջմիածնի պատերի տակ փչում է իւր  
վշտաբեկ հոդին Հայկունին, երբ, կարծես մահապոյժ ազդն հոգու  
մէջ, զնացել էր վերջին ձեռքս տալու իւր երկերին, երկեր, ո-  
րոնց լոյս անսատ մասից մակարերել կարող հնաք մնացածի մե-  
ծայարգ շահեկանութիւնը, ազգագրական հարուստ նիւթ:

Ժողովող ժողովրդական հայկական զրոյցների, աւանդու-  
թեանց, սովորութիւնների, վարք բարքի, տօնախմբական ծէսե-  
րի, կենցաղական նիստ ու կացի և բոլոր բովանդակ այն արտա-  
յայտութիւնների որոնք ամբողջացնում են մի ազգի կեանքը: այդ  
է եղել Հայկունու ամբողջ գեղերմունքը գործունէութեան մի ամ-  
բողջ կէս դար, և այդ էլ նորա երախտիքը: իւր երկունքով Հայ-

կունին այն վաստակաւորներից է, որոնք ատաղձը պատրաստում են կառուցուելիք մի հոյակապ շնչքի համար։ Եւ որքան ընտիր է ատաղձը ու խնամքով պատրաստուած, այնքան էլ թանգ կը զնահատուի, աշապրաւ ու տեսական յիշտակարան նկատուելով, հոյակերտուած շնչքը Ընտիր կաւից քաջարուեստ բրուտն էլ սքանչելի անօթ կը գեղակերտէ։

Որոնք վերաշնելու են վերականգնելու ձգտող մի ժողովը դի ապագան դէպի տիրապլուս ազգութիւն, առանց այդ ժողովրդի էութիւն ու խկութիւնն իր բոլոր արտայայտութիւնների մէջ ուսումնասիրելու, կարող չեն պատշաճաւոր և տեսւն մնաւուն կերպաւորութիւն տալ նորան։

Հայկունիներն իրենց բերած ատաղձով գերազոյն բանուորաներն են ազգաշինութիւն գործում, Երախտապարտ զգացումը միւսների կողմից, որոնք օժտուած են պարտաճանաչութեան գիտակցութեամբը, արժանաւոր հատուցումը կը լինի Հայկունիների յիշտակին։ Իսկ այդ երախտապարտութեան խկական արտայայտութիւնը, երբ երախտաւորները վերացել են մեզանից, ինչնում պիտի երեխի Լաւապէս և օգտակարապէս՝ նոցա իսկ գործով նոցա անունը յարատեն պահպանելու գուրգուրանքով։ Մեր պապերը, մինչեւ մեր իսկ օրերում, մի բարեպաշտօն աւանդապահութեամբ, իրենց անցած սիրելիների և երախտաւորների շիրիմների վրայ խցիների մէջ կրակ անելով խունկ էին ծխում շաբաթ օրերը Նուրիբական զգացումների հուր ու բոյր, որքան սրտառուչ՝ այնքան և վսիմական, բանաստեղծական։ Իսկ մենք նորերս, որ այսօր զերեզմաններին այցի գնալու գողտը սովորութիւնը լքել ենք, մեր անցեալ երախտաւորների յիշտակը մի այլ տուրքով պիտի մնարենք, այն է նոցա իսկ գործը շաբունակելով, նոցա աքնութեան երկերը հրապարակի վրայ պահելով և որոնք դեռ դարանների մթնում են՝ լոյս աշխարհ հանելով։

Չեմ կարող, առիթը գալով, այստեղ յիշտակել հառաջը մի մեծ վաստակաւորի, որ իւր օրերի վախճանը մօտալուս զգաւով՝ հոռաչներից ամենամորմորիչն էր արձակում, այն է՝ կը գտնուիր արդեօք մէկը որ ի լոյս ընծայել տար իւր յիշտակարանը, բազմարովանգակ՝ ստուար երկասիրութիւն։

Մատենագիր վաստակաւորների համար, որոնք գործին սիրահար՝ իրենց ամենաջերմ զգացումների խկութիւնը և բազմատանջ աքնութիւնների երկար ու ձիգ ժամերը դրել ու դրոշմել են իրենց զրաւոր երկերի մէջ, իրենց ամենաջերմ իղձը և թախանձագին հայցուածը յատնորդներից՝ այդ երկերը ցեցին ու մէցին բաժին չթողնելն է։

Հայկունու բազմահարուստ աղքագրական վաստակների դեռ  
մի ստուար մասը լոյս տեսնելու է սպասում։ Որոնք սիրում են  
արձաններով մեծարել աղջի արդիւնաշատ զաւակների յիշատակը  
թող խնամոս հողածութեամբ ջանք գործ դնեն Հայկունիների  
ամենաընտիր ժառագութիւնը, որ նոքա բովանդակ անձնուիրու-  
թեամբ, նոյն իսկ օրականիկին կարօտ քաշ զալով, մտածել են  
վաստակելու թողնել աղջին, դարանների խորչերում ցեցին ա-  
ւար չմատնելու։

Այս այդ գրաւոր յիշատակարանները հրապարակի վրայ  
դնելն էν որ պիտի հանդիսանայ նախամեծար կոթողը, արժանա-  
ւոր յուշարժանը երախտաւորների յիշատակին։ Իսկ այդ պա-  
տուանդանի վրայ ապա, ժամանակ անցած, կը գայ բազմել մար-  
մառիօնը՝ զալիք սերունդների խնամքով։—

Ա. Մ. Խղճկեան

